


**1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը)

	2005թ. հունվար-նոյեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ծավալը, մլն. դրամ	2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2004թ.	2005թ.
Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, ընդամենը	1187446.3	111.5	100.0	100.0
<i>այդ թվում</i>				
Առևտրի շրջանառություն ¹ , ընդամենը	906076.1	110.0	77.3	76.3
<i>դրանից՝</i>				
մանրածախ առևտրի շրջանառություն	740320.3	109.0	63.7	62.3
Ծառայություններ ¹	281370.2	116.7	22.7	23.7

Սպառողական շուկայում առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-նոյեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 11.5 % աճ՝ 2004թ. հունվար-նոյեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 1.0 տոկոսային կետով աճել է ծառայությունների ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել առևտրի շրջանառության տեսակարար կշիռը :

¹ Սկսած 2005թ-ից ցուցանիշները ներկայացված են ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» :

Մանրածախ առևտուր


2005թ. հունվար-նոյեմբերին մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 740320.3 մլն. դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.0%-ով: 2005թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 94.3%:

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2005թ. հունվար-նոյեմբերին

	Ծավալը, մլն. դրամ	Ընդհանուրի նկատմամբ, %
Մանրածախ առևտրի շրջանառություն, ընդամենը	740320.3	100.0
<i>այդ թվում</i>		
խանութների	370451.5	50.0
սպառողական ապրանքների շուկաների	233437.0	31.5
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	22595.8	3.1
կրպակների	47906.5	6.5
առևտրի այլ օբյեկտների	65929.5	8.9

Մանրածախ առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2005թ. հունվար-նոյեմբերին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-նոյեմբերին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 81.5 % (603888.5 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2005թ. հունվար-նոյեմբերին առևտրի շրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 233437.0 դրամ:


Սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ծավալն ըստ ՀՀ մարզերի, 2005թ. հունվար-նոյեմբերին

	Ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	213990.1	13.5	86.5
Արագածոտն	279.9	-	100.0
Արարատ	1466.3	-	100.0
Արմավիր	3776.2	26.3	73.7
Գեղարքունիք	1852.3	22.6	77.4
Լոռի	4874.5	47.1	52.9
Կոտայք	2173.8	19.4	80.6
Շիրակ	1624.8	8.3	91.7
Սյունիք	755.0	-	100.0
Վայոց ձոր	221.6	49.8	50.2
Տավուշ	2422.5	25.2	74.8
Ընդամենը	233437.0	14.6	85.4

Հարկ է նշել, որ հանրապետության սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում 2005թ. հունվար-նոյեմբերին կազմել է 85.4%:

Սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-նոյեմբերին 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների առևտրի շրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 1.0 տոկոսային կետով:

2005թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի օբյեկտներում կազմել են 66618.8 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 64 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-նոյեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել առևտրի շրջանառության ընդհանուր ծավալի 3.1% կամ 22595.8¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառության ծավալները հաշվառված չեն:


Ծառայություններ

2005թ. հունվար-նոյեմբերին մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 281370.2 մլն.դրամ, որը 2004թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 16.7 %-ով:

2005թ. հունվար-նոյեմբերին 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.4% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է կրթության (1.5%), կոմունալ (2.9%), հյուրանոցների և ռեստորանների (3.9%), սոցիալական (15.2%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ նվազել են՝ տրանսպորտի, կապի, առողջապահության ծառայությունների սակագները, համապատասխանաբար՝ 2.0, 2.7 և 0.4%-ով:

Ծառայությունների կառուցվածքը 2005թ. հունվար-նոյեմբերին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-նոյեմբերին ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի (84766.7մլն.դրամ) և կապի (71882.8մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 30.1 և 25.5%:

Ծառայությունների կառուցվածքում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ֆինանսական (22166.8մլն.դրամ), կրթության (20816.8մլն.դրամ), առողջապահության (18817.7մլն.դրամ), հյուրանոցների և ռեստորանների (16387.3մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 7.9, 7.4, 6.7 և 5.8%: